ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13.10.2023թ.
Ժամը 11[20]

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, փոխգնդապետ Գ. Սարգսյանը բացակայում է նիստից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետ, գնդապետ Գ.Մովսիսյանը:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետ, գնդապետ Գ.Մովսիսյան,

ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի սպա Խ. Երիցյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Զադոյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ ՊՆ ԳԿ վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ներսիսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս. Ներսիսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին, համապատասխան կազմած լինելու մասին.
3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5.Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս. Ներսիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար էլեկտրոնային գրատախտակների, դյուրակիր համակարգիչների և ռենտգեն հսկողության սարքերի մատակարարման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս. Ներսիսյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ–ի հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին կից ներկայացված ծանոթությամբ պահանջվել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացնելու պարագայում՝

1-ին չափաբաժնի համար՝

2-րդ կետի պահանջը (հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները) և 3-րդ կետի պահանջը Մատակարարը պետք է հայտը ներկայացնելու հետ պարտադիր ներկայացնի արտադրողի կողմից պաշտոնապես հրատարակված Տեղեկատվական բրոշյուր (Data Sheet), որտեղ պետք է զետեղված լինեն սարքի բոլոր այն բնութագրերը, որոնք մասնակիցը ներկայացրել է:

2-րդ չափաբաժնի համար՝

պահանջվող 2-րդ կետի պահանջը (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները):

Ուստի անհրաժեշտ է ներկայացնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին կից «Ծանոթություն» բաժնով պահանջված տեղեկությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 13.10.2023թ., որոշեց կասեցնել նիստը և առաջարկել «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

17.10.2023թ. շարունակելով նիստը, գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ՝ 0:

3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ս. Ներսիսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգի հրավերին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի նախահաշ-վային գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր նախահաշ-վային գումարը (ՀՀ դրամ)	Մրցույթին մասնակցող կազմակերպության			
						անվանումը	գնային առաջարկը		
							առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Էլեկտրոնային գրատախտակ ներ կամ պարագաներ	հատ	15	3,649,000	54,735,000	«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ	45 500 000	9 100 000	54 600 000
2	Դյուրակիր համակարգիչ ներ	հատ	206	200,000	41,200,000		26 883 000	5 376 600	32 259 600

3.2 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ս. Ներսիսյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 18.10.2023թ., «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ ընթացակարգում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ն:

4.2 Ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

4.3 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ չսահմանել, քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Ներսիսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ՝ 0:

Գնահատող	Գ.Մովսիսյան
Գնահատող	Խ. Երիցյան
Գնահատող	Ռ. Զադոյան
Գնումները համակարգող՝	Ս.Ներսիսյան